

## ՊԱՐԹԵԿՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե

ՆՐԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՅ ՀԵՏ.

( 250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ )

### Ա. Մակեղոնական շըջան.

( Եաբունակութիւն ) \*

**Վ**իթրիգատէսն իւր սահմաններն ընդարձակեց գեղի արևելք. բակտրիական յոյն տէրութիւնն այդ ժամանակ ներքին կոխուերի շնորհիւ տկարացել էր, ուստի և Միթրիգատէսն մի քանի նահանգներ Խլեց նրանից մերձաւորապէս 161 թ. Ք. ից առաջ, նոյնպիսի յաջող հանգամանքներ նպաստեցին պարթեաց թագաւորին արևմուտքում, ուր արի Դեմետրիոսի ընդդեմ կռուելով ներքին թշնամիք վերջապէս յաղթեցին նրան (150 թ.) և թագաւորեց Ալէքսանդր Թէ ոպատոր Եւեր գետէ սը, որ իրեն Անտիոքոս Եպիփանի որդի էր Հաչակել, Եգիպտոսի թագաւոր Պաղոմէսո Ֆիլոմետորը սրա ընդդեմ զինեց 147-ին Դեմետրիոսի որդուն, երկամեայ պատերազմից յետոյ յաղթելով նրան քշեց (145) և թագաւորեցրեց Դեմետրիոս Բ. Կիստիոն։ Սա իւր վարդով ատելի դարձաւ չուտով իւր հպատակներին, ուստի և յաջողութիւն ունեցաւ Դիոգետ սը, որ ստոր ծագութից մի անձն էր և ապստամբութեան զրօշը բարձրացրեց Ապամեայում։ Դիօգատոսն իրեն թագաւոր Հրամարակեց Տիե՛ֆօ անուամբ և հինգ տարի կռուելով Դիմետրիոսից Ասորիքի մեծագոյն մասը Խլեց, Հենց այս միջոցին ծագեց պարթեաց և մարաց կը-սիւր։ Միթրիգատէսն հեշտութեամբ նուաճեց Մարստանն ու Բարելսիան Սկեկիա մայրաքաղաքով (142—140), Պարթեական լուծը ծանր թուեցաւ այս նահանգների բնակիչներին և նրանք Հրամարեցին Դեմետրիոսին իրենց օգնութեան։ Դեմետրիոսն Ասորիքում այլ ես կորցնելու բան չունենաւ լով 140 թուին արշաւեց գեպի Միջագետք, ամենուրեք գրկարաց ընդունեցին նրան, մինչև իսկ բնիկ փոքրիկ թագաւորութիւնները (պարսից, Ելեմայեցոց և բակտրիացոց) միացան ասորոց թագաւորի հետ Սկզբում յաջող գնացին Դեմետրիոսի գործերն, բայց վճռական ճականագույն մասում Աղիարենէի թագաւորութիւնն, որ յիշատակուում է 69 թ. և նույսայի թագաւորութիւնն, որ հիմնուել է 132 թ..

Սով վերջնականապէս ջախճախուեցաւ Սկեկեան իշխանութիւնն Իրանում և Միջագետքում ու նրանց բոլոր բնակչութեամբ նշանաւոր նանէի կամ Արտեմիսի տաճարը կողոպսելով 10,000 տաղանդից աւելի (23 միլ. ռուբլի) գանձ յափշտակեց, Խնչպէս թուում է նա այսեղ Արշակունեաց հարստութեան մի ճիւղի թագաւորութիւնն հաստատեց, որի ներկայացուցիչներից մէկի անունն յայտնի է մեզ 82 և 81 թուականներից ք. ից առաջ, Այդ թագաւորի անունն է Կամասացի թիւ էս, որ 96 տարի կեանք է ունեցել և որի գրամներն անգամ ունինք մենք.

Միթրիգատէսն իւր կեանքի վերջին կուիւ մղեց և Ելեմայեցոց գեմ, որոնց հարստութեամբ նշանաւոր նանէի կամ Արտեմիսի տաճարը կողոպսելով 10,000 տաղանդից աւելի (23 միլ. ռուբլի) գանձ յափշտակեց, Խնչպէս թուում է նա այսեղ Արշակունեաց հարստութեան մի ճիւղի թագաւորութիւնն հաստատեց, որի ներկայացուցիչներից մէկի անունն յայտնի է մեզ 82 և 81 թուականներից ք. ից առաջ, Այդ թագաւորի անունն է Կամասացի թիւ էս և որ 96 տարի կեանք է ունեցել և որի գրամներն անգամ ունինք մենք.

Միթրիգատէսը մեռաւ 138 թուին փառաւոր ծերութեան հասակում և պարթեաց պատմութեան մէջ տէրութեան հիմնադրին հաւասար հոչչակ ունեցաւ, որովհետև նա պարթեական տէրութիւնն մեծ պետութիւն դարձրեց, հարստացրեց, ընդարձակեց և նուածուած երկները լաւ օրէնքներով հաստատուն հիմքի վրայ դրաւ.

Միթրիգատէսի ժամանակ պարթեական տէրութիւնն տարածուում էր Հնդկական Կովկասից մինչև Եփրատ գետն և Մարաստանից մինչև պարտական ծոցը. այս աշագին տարածուութիւնն երկու մասի էր բաժանուում, վերին և ներքինը կամ արևմտեանն ունէր 7 սատրապութիւն, իսկ վերինը 11, ընդամենը 18. Կյո միջոցին պարթեաց հիւսիսային սահմաններում գոյութիւն ունէր գեռ Փաքր Մարաց թագաւորութիւնն, հարաւում Ելեմայեցոց տէրութիւնն և Պերսիսը, բոլորովին արևմտեան հիւսիսային մասում Աղիարենէի թագաւորութիւնն, որ յիշատակուում է 69 թ. և նույսայի թագաւորութիւնն, որ հիմնուել է 132 թ..

Կյո մանր տէրութիւնները ճանաչել էին պարթեաց գերիշխանուութիւնն, երբ պարթեաներն զօրաւոր էին լինուում. կարողանում էին պահպանել և այդ գերիշխանուութիւնն, իսկ երբ ներքին պատերազմների պատճառով տկարանում էին, գերիշխանուութիւնն միայն անուանական էր մ'ուում. Տըրդատ Արշակն արդէն մեծ արքայ էր կոչուել նրան հետեւել էին իւր յաջորդները մինչև Միթրիգատէս, որ կոչուեցաւ արքայից արքայ և Կյո տիտղոսը անհանակ մի ածական չէր, այլ չնորհուած մի մակդիր, որովհետև միթրիգատէսից յետոյ 70 տարի շարունակ այդ տիտղոսը ոչ ոք չստացաւ.

Պարթեաց տէրութեան մէջ թագաւոր նշանակելու գործի մէջ մեծ էր աղնուականութեան աղ-

գեցութիւնը։ Թագաւորից յետոյ առաջին տեղը պատկանում էր ծերակուտին, որի անդամներից ընտրուում էին բոլոր զօրավարներն և կուսակաները։ Սրանք կոչուում էին թագաւորի տօհմակիցներ, որ անշուշ հին պարմիական նախարարներիցն էին ծագել։ Բացի այս ծերակուտից կար մի այլ ծերակոյոյ, բաղկացած իմաստուններից և մողերից, որ նյուպէս մասնակցում էր թագաւորի կարգման։ Հայելով տարածուած թիւր կարծիքներին, պարթեաները զերմեռանդ զորաստրեաններ էին, սակայն հարկաւ ոչ այն աստիճանի, որքան Սասանեանների, որոնց հետ համեմատելով սրանց սիսալմամբ անտարբեր զրագաշտական են համարել։ Մակեդոնական շրջանը աւարտուած կարելի է համարել Սելևկեան մեծ պետութեան անկմամբ և Միթրիդատէսի պարթեական տէրութեան հաստատութեամբ (138), որի ասհմանների մէջ չէր մտնում սակայն Հայաստանը, որ ինչպէս պատմութեան շարունակութիւնից կերպի մի անկախ տէրութիւն էր և կարծ ժամանակ (Առ տարի) նոյն իսկ գերիշխան դարձաւ առաջաւոր Ասիայում։

### Բ. Արշակոնեան շրջան

Գրաւատէս + Բ. յաջորդեց Միթրիդատէս Ա-ին 138 Քրիստոսից առաջ և շարունակեց իւր հօր սկսած գործերը։ սա էր որ սկիւթ աշխարհակալների ձեռքից Խլեց Բակտրիոյ Մարգիանա նահանգը։ Սրա ժամանակ տեղի ունեցաւ Սելևկեանց վերջին փորձը կորցրած գերիշխանութիւնը կրկին յետը զրաւելու համար։ այդ ձեռնարկութիւնը պատկանում էր Անտիոքա և ինին, որ Սելևկեանց թագաւորների շարքում արիագոյնը կարող է կոչուել և որ վերջ էր գրել բոլոր ներքին կոիւներին Ասորիում։ թագաւորական իշխանութեան զօրութիւնը վերականգնել էր, նոյն իսկ ընկճել էր հրէաներին, առել էր Խրուսաղէմն և ստիգմ հրէից, որ իրեն զօրք տան։ Պարթևաց գէմ արշաւեց նա 130 թ. 300,000 մարդուց բաղկացած մի բանակով որի մէջ սակայն 80,000 հոգի միայն մարդիկ էին, իսկ մասցեալն բանակի աղիսի պահապաններ ու ծառաներ էին, Պարթևաց սահմանները մտնելուն պէս բոլոր մանր թագաւորներն ու նահանգների բնակիչները միացան Անտիոքոսի հետ, երեք ճակատամարտում յաղթող հանդիսացան և տիրեց մինչև Եկեղատան։ Պարթևաց սակայն Արտարանի հակառակ թագաւորն առաջակունների գրամները վկայ են այդ մասին։

մանր գնդերի բաժանեց և ցրուեց զիւզերն ու քաղաքները, Ասորական զօրքը իւր խիստ պահանջներով զրգուեց ժողովրդին, որ և զաւագրութիւն կազմելով մի ժամադրեալ օրուան մէջ յարձակուեց ասորական գնդերի վրայ և սկսաւ ջարդել. մինչ Անտիոքոսը օգնութեան էր դիմում իւր գնդերին, պատահեցաւ Գրաւատէսի 120,000 հոգուց բաղկացած բանակին և ճակատ տալով պարտութիւն կրեց, ինքը վիրաւորուած փախստեամբ ազատուեց և թըշնամու ձեռքը ըլնկնելու համար մի ժայռից գահհավեժ եղաւ ու մեռաւ, Այս եղերեկան վախճան ունեցաւ Սելևկեանց վերջին ձեռնարկութիւնն և սկսած 129 թուականից Պարթևներն ընդ միշտ ազատուեցան Ասորոց յարձակումներից, Գրաւատէսը զբով թաղման հանգէս կատարել տուաւ Անտիոքոսի համար, Նրա աղջկանց մէկին կնութեան առաւ իրեն և անդրանիկ որդուն Սելևկոսին ուղարկեց Ասորիք, որ իւր հօր գահն ամրանայ, Պարթևաց թագաւորը արևմտեան թշնամուց ազատուելով մի աւելի զօրաւոր թշնամի վաստակեց. Անտիոքոսից նեղուելով նա գիմել էր Սկիւթների օգնութեան առաւ վարձ խոստանալով. սակայն մինչև Նրանց հասնելն, արդէն ինքն յաղթել էր թշնամուն, ուստի մերժեց Սկիւթների վարձը, Նրանք էլ արշաւեցին և ասպատակեցին պարթևաց երկիրն և կողովտելով հասան մինչև Միթրագետք, Գրաւատէսը Նրանց գէմ ելաւ և Կորի ի գլուխ ջարդուելով սպանուեցաւ ճակատամարտում 128 թ.

Գրաւատէսին յաջորդեց Գիրապոտիուսի երրորդ որդին, Արտարանը Բ. (Երտաւան), հաշտութիւն արաւ Սկիւթների հետ, Նրանց հարկ խոստացաւ տալ և հրաժարուեց տէրութեան արևելեան բաժնում Պրանգիանայի հարաւային բաժնից, ուր սկիւթներն հաստատուեցան և երկիրն էլ Նրանց անունով սեւ Սակատան կամ Սեստան կոչուեցաւ, Այս միջոցս մեծամեծ շփոթութիւններ են տեղի ունեցել Պարթևաց երկրներում, որոնց մասին պատմութիւնը լուսում է, սակայն Արտարանի հակառակ թագաւոր արշակունինների գրամները վկայ են այդ մասին։

Արտարանին յաջորդեց իւր որդի Միթրեդիտական Բ. Մեծուն, Սա պիտի թագաւորած լինի 123 թ. քիչ յետոյ։

Գրաւատէսի մահուանից յետոյ (127 թ. ից առաջ) յաջորդեց Գրիապատիւսին երրորդ որդին՝ Արտարանոս Ա. (Երտաւան), որ գրամների վրայ կոչուում է Արշակ Թէոպատոր Նիկատոր։ Սրա ժամա-

+ Դրամների մրայ կոչում է՝ Arsaces Theopator Euergetes Epiphanes Philhellén.

նակ պարթեաց տէրութեան մէջ ներքին երկապառակութիւններ կային, որ գուշակում ենք դրամներից, Արտաւանը պատերազմ մղեց Տոխարացինների գէմ և վիրաւորուելով մեռաւ շատ կարճ միջօց իշխելուց յետոյ:

Սրան յաջորդեց իւր որդին, Միթրիդատէս թ. Մեծն, որ և եղաւ պարթեական տէրութեան վերահաստատողն էիցը չէ կարելի որոշել Միթրիդատէսի գահ բարձրանալու տարեթիւը. Հաւանական է որ այդ տեղի ունեցած լինի 123 թ. Ք.-ից առաջ: Պատմական ընդհանուր ձևով մեզ հասած տէղեկութիւնն ասում է, որ սա շատ պատերազմներ մղեց և յաղթեց սկիսեցացիններին մի քանի անգամ. երեսում է որ Միթրիդատէսի զանքն է եղել ձեռք բերել իւր նախորդների կորցրածները, այսպէս նա հաստատեց նախկին արեւելեան սահմանն և արևմտութում վերջանական սահման դարձրեց Եփրատը, որ այնուհետև միշտ իրեւ պարթեական սահման նկատուեց:

Իւր թագաւորութեան վերջին օրերում այնքան գորացել էր Միթրիդատէսն, որ վըստահացաւ խառնութելու Մեծ-Հայրի գործերի մէջ: Նախընթաց մի պատերազմից յետոյ Հայաստանի թագաւորն ստիպուած էր եղել իւր որդուն, Տիգրան Բ-ին, պատանդ տալու պարթեներին: Արդ, Միթրիդատէսն Տիգրանին թագաւորելու նպաստեց հակառակ Արտավազ Ա-ի (հաւանօրէն Տիգրանի ասագ եղածը) եւ զէնքի ուժով հայոց զանի վրայ քազմեցրեց սրան 94 թ. Ք.-ից առաջ: Ի տրիտուր այս ծառայութեան Տիգրանը պարտաւորութեաւ պարթեաւց թագաւորին տալ Հայաստանից 70 հովիտ:

Երրեւ Միթրագետքի տէր Միթրիդատէսն յարաբերութիւն սկսաւ Հռովմի հետ և բանագնացութեան մէջ մուա Կիրկիսյ պրէտոր Սուլպայի հետ 92 թուին: Այս բանագնացութեան նպատակն էր Ասորիքի մասին ունեցած պարթեական դիտաւորութիւնները, որովհետև այդ միջօցին պարթեները կուի էին մղում Կոմմոգէնի Լաոդիկէա թագուհու հետ, որին օգնում էր Անտիոքոս Փ. Քիչ ժամանակ յետոյ պարթեները խառնուեցան Սելեկեան-ների ներքին կուիներին և 88-ին գերի բռնուեցաւ Դամասկոսում թագաւորող Դիմետրիոսը, որ Միթրիդատէսի պալատում մնաց ապա մինչև իւր մահը. Այս յաջորդութիւնից քիչ յետոյ պէտք է մեռած լինի Միթրիդատէսը:

Միթրիդատէսին յաջորդեց Արտավածթ. և պանից յետոյ «արայից արքայ» տիտղոսը սեփականեց իրեն մի ոչ պարթեւ թիգրան. Բ. Հայաստանի թագաւորը, եւ այնպէս տկարացրեց պարթեաց զօրութիւնը, ինչպէս ոչ ոք չէր կարողացել: Երբ 86 թուին նրան Ասորիքի մի մասում թագաւոր ճանաչեցին, այդ ընտրութիւնն արդարացնուած էին նրանով, որ Տիգրանը դաշնակից էր պարթեաց, սակայն շատ չը տեսեց, որ պարթեներին ներքին եւ արտաքին կոփառերի շնորհի այնքան տկարացան, որ հայոց հետ էլ համատուել կարող չէին:

Պարթեական այս ներքին շփոթութիւնների միայն վերջին գործողութեան հետ ենք մնեք ծանութ. 77 թուին Սին առ ու կ է ե ս ը Սակարառուկների երկրից եկաւ և թագաւորեց 80 տասոյ հասակում Շ տարի: Սակայն հազիւ թէ սա մակը լինի այն գահ յափշտակողներից, որոնք այդ շնչանում իշխել են պարթեների երկրում: Այս ժամանակից դրամները չունինք մենք, որևէ ապացոյ է խառնակ վիճակի, Տիգրանը տիրեց Մարատանին կամ նրա այն մասին, որ Արտավածթական էր կոչում, բայց նա մոռաւ եւ պարթեաց պատկանող Մեծ Միթր Մարատան, աերեց Արտավածնը, Եկրատանի կառավարչի դիեակը, որ միայն 10 հազարամէտր հեռու է Եկրատանից: Այս քաղաքը Արշակունիների մայրաքաղաքն էր Փրատէս Բ-ից սկսած մինչեւ Միթրիդատէս Գ.: Այն 70 հովինները, որ Տիգրանը սոուել էր երրեմս պարթեաց թագաւորին ի զին իւր թագաւորելուն, այժմ յետ խեց: Տիգրանն աւերեց նիսուին եւ Արքելայի շրջակայքն եւս, նա նուածեց պարթեաց հապատակ Աղիարէնէի թագաւորութիւնն եւ Միթրագետքը Մծրին ամրոցվ: Այս կոփառերից վերջինը Տիգրանը վարեց Սինատրուկի հետ, հասնօրէն այս կոփառ զեռ շարունակում էր, երբ Գոնտոսի թագաւոր Միթրիդատէս (Միթրատ) օգնութիւն կանցեց երկու թագաւորներին եւս, բայց իզուր:

(Եաքանակակենի)

Ն. Քարամինան.

1. Trogus-ի գրքի մէջ ներս սպլիտած մի խանգարման հիման վրայ այսպէս է զասաւորում. *Պուտըշմիդ պատմական գէպէքերը, որովհետև „Successores deinde eius Artabanus et Tigranes, ... situs“ 41. գլուխ լինելու փոխանակ պիտի լինէր 42. գրքի մէջ, Այս Արտաւանինն են զամաները, որոնք կում են «Արշակ Եւերգետէս Քիլչելլէն» գրոշմը,*